ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի փետրվարի 21-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ պայմանագրում 2018 թվականի ապրիլի 9-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 ՀՀ Կառավարության 29.03.2018թ. թիվ 326-Ն որոշում:

Փոփոխության նկարագրություն Պակասեցվել է 2018թ.-ի համար նախատեսված գումարը, փոխարինվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը,

Փոփոխության հիմնավորում 2018 թվականի փետրվարի 21-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

21.02.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ գնման պայմանագրի

ք. Երևան 09 ապրիլի 2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թ. մարտի 29-ի N 326-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 21.02.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի.

1.1.1 2018թ. համար նախատեսված գումարի <<935 500 (ինը հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր)>> բառերը փոխարինել <<632 800 (վեց հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր)>> բառերով.

1.1.2 հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012524 ՀՎՀՀ 02565827	<<Հայնախագիծ>> ԲԲԸ ք. Երևան, Չարենցի 1 <<Արդշինբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2470100038500000 ՀՎՀՀ 01503291
Խատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
---------- Ա. Մկրտչյան (ստորագրություն)	---------- Գ. Ազիզյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
09 ապրիլի 2018թ. կնքված N 2 համաձայնագրի
<<Հավելված N 2
21.02.2018 թ. կնքված
ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/13	ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	149800	149800	149800	362300	362300	362300	632800	632800	632800	632800

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:* >>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012524, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն)

Կ.Տ.